ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-28/22 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 «04» «10» 2022թ.
ժ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԳԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/, Արսեն Մելքոնյան/ԲԱ/, Գուրգեն Մելքոնյան/ԲԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-28/22 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար դպրոցական գույքի և տեխնիկայի ձեռքբերման մրցույթի գնային առաջարկների ներկայացման և գնահատման արդյունքների հաստատման մասին.

Քանի որ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով <<ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ-ի և <<Արթուր Գրիգորյան>> ԱՁ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում էին տվյալ չափաբաժինների համա նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի գնահատող հանձնաժողովը՝ Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ և ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-28/22 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 8.7 կետի դրույթներով <<ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ-ին և <<Արթուր Գրիգորյան>> ԱՁ-ին ծանուցել էր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման մասին: <<ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ -ի ներկայացուցիչը ներկայացավ բանակցություններին և 1-ին և 4-րդ չափաբաժինների համար ներկայացրեց նոր գնային առաջարկ, <<Արթուր Գրիգորյան>> ԱՁ-ի ներկայացուցիչները բանակցություններին չեն ներկայացել, էլեկտրոնային եղանակով ներկայացնելով նոր գնային առաջարկներ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար:

1. Բավարար գնահատված հայտերի գնային առաջարկները՝ ՀՀ դրամով

1-ին չափաբաժին՝ Հակահրդեհային համակարգ

h/h	Մասնակցի անվանումը	Ապրանքի նախահաշվային գինը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ	Առաջարկված գնի՝ ԱԱՀ	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով
1	<<ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ	141600	141000		141000
2	<<Արթուր Գրիգորյան>> ԱՁ		141600		141600

2-րդ չափաբաժին՝ Սպորտային մարմնամարզության նժույգ(մարզումային)

h/h	Մասնակցի անվանումը	Ապրանքի նախահաշվային գինը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ	Առաջարկված գնի՝ ԱԱՀ	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով
1	<<ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ	93000	103000		103000
2	<<Արթուր Գրիգորյան>> ԱՁ		93000		93000

3-րդ չափաբաժին՝ բասկետբոլի ցանց

h/h	Մասնակցի անվանումը	Ապրանքի նախահաշվային գինը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ	Առաջարկված գնի՝ ԱԱՀ	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով
1	<<ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ	120000	130000		130000
2	<<Արթուր Գրիգորյան>> ԱՁ		120000		120000

4-րդ չափաբաժին՝ Բեմի վարագույրների ավտոմատացված համակարգեր

h/h	Մասնակցի անվանումը	Ապրանքի նախահաշվային գինը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ	Առաջարկված գնի՝ ԱԱՀ	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով
1	<<ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ	2170000	1898000		1898000
2	<<Արթուր Գրիգորյան>> ԱՁ		1899000		1899000

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար կազմակերպված **ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-28/22** ծածկագրով դպրոցական գույքի և տեխնիկայի ձեռքբերման armeps համակարգի կողմից ներկայացված հայտերի գնահատման արդյունքների հիման վրա գնահատող հանձնաժողովն ընդունեց հետևյալ որոշումները.

-Ընթացակարգի 1-րդ և 4-րդ չափաբաժինների մասով մրցույթի ընտրված մասնակից ճանաչել <<ԱՌԳՈՒՍ ՍՈԼՈՒՇՆՍ>> ՍՊԸ -ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մրցույթի ընտրված մասնակից ճանաչել <<Արթուր Գրիգորյան>> ԱՁ-ին:

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները ՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 205 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Ա. Զոհրաբյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Ա. Մելքոնյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան